

Պատմութեան լոյսերուն տակ կը տեսնենք ուրեմն թէ Հայց. եկեղեցւոյ նուիրապետութիւնը Լուսաւորչէն մինչեւ կիլիկեան թագաւորութեան վերջը, չէ՛ եղած ունէ ատեն՝ նոյն իսկ աշխարհիկ պետութեան պէս բան մը, եւ ասիւ կա ուղիղ հետեւանքն է միջավայրի պահանջներուն եւ պատմական իրողութիւններուն:

ԿՐՈՆԱԿԱՆ

ՓԱՌԱԿՈՐԵԱԼ ԴԷՄՔԵՐ

(Աւագ Տօներու առ բիւ)

«Եւ որ ինչ ի՞մ է՝ ամենայն ե՞ւ է, եւ որ ինչ ե՞ւ այն ի՞մ է, եւ փառաւուեալ եմ ի նոսա»: Յովն. Ժ. 10:

Աւետարանին դասերը ամուլ չե՞ն մընացոծ աշխարհի խլացուցիչ ազմուինեւ բուն մէջ: Թէկ թըմ- ֆրկան ֆլութերը բած բայց առողջ հոգիներ արթնցան Փրկչին ձայնէն, որ աւետիքն էր նոր կեանքի մը, և հետեւեցան անոր՝ վստահ և ամուր քայլքով: Հայաստանեայց եկեղեցին փայլուն կաճառ մը կազմեր է Փրկչին այս հետեւոներէն, ուրոնք, սուրբի լուսապատակը իրենց զլիուն, կուգան կը շարուին եկեղեցւոյ մէջ, իրարու հետէն և իրարու հետ, իրենց աներեւոյթ բայց փառաւորեալ դէմքերով, տօնախմբութեանց հանդիսաւոր, լուսազարդ, պերճաշուք, սրտայրյա, հոգեռանդն արարողութիւններուն, սազմօններուն, շարականներուն, քարոզներուն, երգերուն, ազօթքներուն, խունկերու բուրմանքին և մոմերու խորհրդալոյս պազդումներուն մէջ, Մեր աշքերով չենք տեսներ զանոնք. նոյն իսկ անոնց անունով նկարուած պատկերներ չեն կրնար արտացոլացնել իրենցմով խորհրդանշուած հոգիները. բայց մենք կ'ըզգանք անոնց արժէքները, և մեր մտքին ու երեակայութեան մէջ կը պատկերանան անոնք իրենց փառաւորեալ դիմիերով:

Աւետարանի դասերուն ուշիմ և նուիրեալ հետեւողներն են անոնք: Փրկչիը ապրած է անոնց հոգիներուն մէջ և իրենք ապրած էն Փրկչով: Սստու ածորդին կը պատ-

ծայ անոնցմով, վասն զի անոնք իր փառքին են, և այդ հանգամանքով ալ Աստուծոյն են անոնք:

Անոնց առաջինն է Ս. Յակոբ, Մծրնի նշանաւոր եպիսկոպոսը, և Հայ շարականազրին Յալրոդ և առյու

Ս. ՅԱԿՈԲ Հայրացինը: Իր պատմութենէն շատ քիչ բան զի-

տինք. բայց մեզի շատ բան հասուցած է աւանդուրինը անոր հրաշալի կեանքէն: Հաւատքի, արօթքի, նուիրումի, սիրոյ, զործի, ծառայութեան տիպարն է Ս. Յակոբ: Անոր պատմանութիւնը և երիտասարդութիւնը մարտնչում մը եղած է մարմինի բռնապետութեան գէմ, և յաջողած անմարմին կեանք մը ապրիլ իր պարտուած միսիերուն մէջ: Պօղոսի ակնարկածին պէս գիտցած է սորվիլ հրեշտակներու լեզուն և ընտելանալ Աստուծոյ ներկայութեան: Յիսուս ըսած էր «Իմ ետեէս եկէք». Ս. Յակոբ լսեց այդ կոչը, հետեւեցաւ անոր և նմանեցաւ Փրկչին, փառաւորեց անորն զործ ու անունը եւ փառաւորուեցաւ Անով: Յիսուս հաւասած էր, իթէ մանանեխի հունտին չափ հաւատք ունենաք, կարող պիտի ըլլաք լիաները տեղափոխել. Ս. Յակոբ եղաւ այդ հաւատքին մարդը, և հրաշալիքներ զործեց: Լիսոներու առանձնութեան մէջ կրթեց ան ինքինքը և պատրաստուեցաւ ծառայութեան, իրեն տօնակից մէկ ճգնաւորի մը, Առքրն Մարտուգէի սիրով, իրորհրդով ու զործակցութեամբ:

Բոլորովին հրաշալի է Ս. Յակոբին կեանքը, մեր զրապաշտ միտքերուն ընդհարող կեանք մը: Բայց արդէն ինքնին հրաշք մըն է գաղափարի ու հաւատքի կեանքը այս զրական աշխարհի կեղտերուն և կեղծիքներուն մէջ:

Աւետարանի առակով, անոր խօսքը աղաւ անհամ ռամկութեան համար, անոր կեանքը լոյսի պէս փայլեցաւ տղիտութեան

խաւարին մէջ, իր հաւատքին վէմը չխախս-
տեցաւ զործունեայ կեանքի ալէկոծութիւն-
ներէն. իր անձին ու խօսքին համաքը կադ-
դոյր մը եղաւ վշտապին հոգիներու և իր ներ-
կայութիւնը՝ կեանքի բոլոր տառապանք-
ներուն և անձկութիւններուն մէջ՝ հրաշա-
զորդութիւնը:

Հայ շարականագիրը նմանցուց զայն մե-
ծըն Մովսէսին, Յովհաննէս Մքրտչին, Վի-
մանուն Պետրոսին: Նարեկացին իր հոգե-
չունչ ներբողներէն մէկին մէջ վերլուծեց
Մծբնայ հայրապետին հոգեոր հոխութիւնը
և անոր Սրբութեան մէծութիւնը և անոր
կրօնքին յատակութիւնը:

Այսպիսի անրիծ կեանքերու մէջ կ'ար-
տայայտուի Քրիստոնէութեան շիտակ և
պարզ նշանակութիւնը, և եթէ ուզէք՝
զործնական ուղղափառութիւնը, զերծ դա-
շանաբանական կնճրաներէ և վե՛ր յարան-
ուանական յաւակնութիւններէ:

Ո՞վ ըստ թէ Աւետարանը սիսոքը է և
հակոտնեայ զբութիւն մը այս աշխարհի
կենցաղին: Նայեց՛ք Ս. Յակոբի պէս կեն-
դանի տիպարներուն, որոնք կ'ապրին գեա,
որովհետեւ ըմբռնած են յաւիտենական
կեանքին գասերը Աւետարանէն, և խմած
են կենդանի ջուրին անցամաքելի աղբիւ-
րէն:

Փրկչին ծննդեան Տօնը կը կանխեն Աւ-
ւագ Տօներուն հերոսները: Առաջին զոյզը
յօրինուած է Հին Կտա-
ԱԱԳ կի հովիւ բանատեղծ
ԴԵՄՔԵՐ — թագաւորին և նոր
կտակի սիւներէն մէկուն
գէմքերէն. — Դասիր Մարգար և Տեառնեղ-
բայր Յակոբ:

Դաւիթ Խորայէի պատմութեան հզօր
և հոյակապ գէմքն է: Անոր բոլոր թերու-
թիւնները և տկարութիւնները, իրքն ուղա-
միկ, պատմական իրողութիւններ են, ա-
րատաւո՞ր իրողութիւններ:

Բայց Քրիստոնէական եկեղեցւոյն մէջ
սուրբի լուսապակով թագուած զլուխը
Յիսոներորդ Սաղմոսը մըմիջող Դաւիթն է,
մեղքին զիտակցութիւնը արտափայլող հո-
գին, որ կեանքի բոլոր հանգրուաններէն
անցած այս աշխարհի մէջ, և իր հանգիս-
տը կը փնտոէ աստուծայինին մէջ միայն,
և համարձակ կը պոռայ, Ողորմեա՛ ինձ
Աստուծ:

Քանինե՞ր կան «քրիստոնեայ» աշխար-
հին մէջ որ Դաւիթի պէս զիտնան յայտա-
րարել թէ մայի իմ առաջի իմ են յամենայի
Ժամ:

Յակոբոս Առաքեալ, Տեառնեղբայր, Ար-
դար կոչուած, նոյն իսկ իր ազգէն, նորա-
կազմ քրիստոնէութեան երեք սիւներուն
առաջնոր, միւս երկուքն ըլլալով՝ Պետրոս
և Յովհաննէս Առաքեալներ, Նախագահը
երուսաղէմի ժողովին, առաջին եպիսկոպոսը
երուսաղէմի եկեղեցւոյն, հեղինակը կաթո-
ղիկէ թուղթերէն առաջինին, տիպար հա-
ւատացեալ մը, որմէ կը պատկառին Հըր-
եալք և նորագործներ հաւատարապէս, որ
կը քաջալերէ Պօղոսին առաքելութիւնը հե-
թունուներու և

Աւանդական պատմութեան համաձայն
ճգնասուն կենցաղի մը ժուժկալութիւննե-
րուն մէջ մարզուած, Արդարն Յակոբ իր
բերանը չէ գրած միւս և ցքի:

Ան իր սրբութեամբ և զիտութեամբ ե-
ղած է Ելլիսա մը, որ կը նշանակէ ո՛չ մի-
այն Արդար, այլ նաև պարիսպ, պաշտպան
ժողովրդեան՝ իր արդարութեամբ:

Յարուցեալ Յիսուս-Քրիստոսի անունն
ու զործը այնքան շեշտուած էր Հքեաննե-
րուն մէջ որ օր մը եկան հարցուցին իրեն.
Ո՞ր և ի Յիսուսին դուռը. — Ինքն Փրկիչն է,
պատասխանեց: Վկայութիւնը բարձրէն կու-
գար, և շատեր հաւատացին Փրկչին: Բայց
ասիկա անհանգիստ ըրաւ խստախրսներն
ու թերահաւատանները, և ըսին. «Աւաղ,
Արդարն ալ մողուած է. պէտք է մէջտողիչն
վերցնել զայն»: Աշտարակէն վար նետե-
ցին զինքն, բայց չմեռաւ Արդարը, և սկսան
քարկոծել. բայց նա ձնրագիր կ'աղօթէր
կաշեցեալն խօսքերով. Հայր, ներէ ա-
սոնց վասն զի ըրածնին չեն զիտեր: Ասի-
կա աւելի կտաղեցւոց Աւետարանին թըշ-
նամինները, և թափիչ մը իր տոփանով զար-
կաւ Էլլիսայի գլխուն և մահացուց զայն:

Երուսաղէմի եպիսկոպոսութիւնը, իրքն
անմիջական հոստատութիւնը կազմակեր-
պուած եկեղեցւոյն, Արդար Յակոբին ա-
նունով կ'սկսի պատմութեան մէջ, որուն
վրայ հիմնուեցան յետոյ յարանուանական
եպիսկոպոսութեանց կամ պատրիարքու-
թեանց աթոռները, որոնց շարքին երու-
սաղէմի Հայ Պատրիարքութիւնն ալ:

Հայց. Եկեղեցին մեծ չքով կը տօնա-

խըմբէ Աւագ Տօներուն այս առաջին դոյցու իսկ Երուսաղէմի մէջ, մասնաւոր հանդիսութիւններով կը պատուուի առոնց յիշատակը ու կը փառաւորուի, և ձայոց Պատրիարքը, տեղական տվյալութեան համեմատ, տարին միայն մէկ անգամ Յակոբոս Տեղապնեղոր տօնին առաւուն, պահ մը կ'եւլէ Ա. Յակոբին Աթոռը, առաւօտեան ժամերգութեան վերջերը, «Փառք ի բարձունասոի եւ Մամլումբ չարականի երգեցողութեան միջոցին, և կ'ընդունի Միաբանութեան ըսնորհաւորութիւնը»:

Ասիկա Տօնն է Երուսաղէմի Առաքելական Աթոռին: Իսկ Աթոռը, խորհրդանշանն է առաքելական իշխանութեան, եկեղեցւոյ կանոնական հաստատութեան, և Աւետարանի ուղղափառ օդիին պահպանութեան դարերու ընթացքին:

Երկրորդը Աւագ Տօներուն նուիրուած է Երուսաղէմի եկեղեցւոյն Նախասարկաւագին ու առաջին Մարտիրոսին: Աւանդութիւնաշատապահ

ապատանի, սիրուն զլուխ մը թագագարդ, ուրարը, Փրկչին լուծին խորհրդանշանը, ուստին կամ ուսընդանութ, մոմ, բուրգառ ձեռքերուն մէջ: Ինքնին սուրբ սպասաւորութեան խորհուրդ մը, պատկեր մը չքնաղ, նկարագիր մը լի՛ սուրբ հոգիով և չնորհքով: Պատրաստ ծառայութեան ամէն մէկ վայրկեան. ուրարը, թեթև, սիրուն, լծեր է Նախասարկաւագը ծառայութեան մը, որուն ծայրը մեռնիլ է գաղափարի և հաւատքի համար: Մոմը խորհուրդն է լոյսին, ճշմարտութեան, զիտութեան, որ ոչ միայն կը փարատէ մութը օդին մէջէն, այլ և հոգիներէն կը հալածէ տղիտութեան խաւարը. բուրգառը արծաթ՝ կը ծխէ ու կը ճնններէ ո՛չ միայն խունկը, զմուռաը և հալուէն, ցայտեցնելով բանաւոր աղօթքին խորհուրդը, այլ և սրբասէր կենցաղի մը և մաքուր բարքին փառքերը հաւատացեալներու մէջ: Այսպէս Աւետարանին լոյսն ու գիտութիւնը վերածելով գործնական կեանքի:

Ստեփանոս, պսակ մը իր անունովն իսկ, իր ծառայութեան առաջին հանդրուանին վրայ, ապացոյցը տուաւ իր հաւատքին ամրութեան, մեռաւ Աւետարանի համար,

գէմյանդիման գալով խաչուած Փրկչին, անոր փառքերուն մէջ, երբ արատաւոր ժեռքեր քարերու կարկառին տակ կ'ուզէին խեղդել անոր ջինջ և հնչուն ձայնը:

Սրբազն երգիչը Նախասակ բարի շարուկանով քարացուցած է Ստեփանոսի ճըգնութիւնը:

Ստեփանոսի քարկոծումը կամեցողներուն միջն միայն մէկ մորդ կար որ ազգուեցաւ Բարի Նախատակին կեցուածքէն, և ներշնչուեցաւ անոր խօսքերէն:

Ո՛ զիտէ, եթէ Ստեփանոս մը չնահատակուէր, թերեւս Պօղոս մը չվերածնէր յանձին Սողոսի:

Ստեփանոսի տօնը Հայց. Եկեղեցւոյ մէջ տօնն է բոլոր դպրոցականներու, բոլոր դըպիններուն, իսկ Երուսաղէմի մէջ, իրեն դասակից սարկաւագներուն:

Անուշ են իմ մանկական և պատանեկան յիշատակներս Ստեփանոսի տօնախըմբութիւններէն ու հոգեոր խրախնանքէն: Եւ երբ հիմայ, կեանքի աստիճաններուն վրայ բաւական վերելքէ մը ետքը, կը տեսնեմ որ Ա. Յակոբայ կամարներուն տակ նոր եւ նուիրեալ Ստեփանոսներ կը փառաւորին տատուածացին պաշտամունքը և պահ մը կը հոգեկցին իրենց տիպարին, Բարի Նախատակի հոգիին, կը յուզուի սիրոս, և կ'ուզեմ որ այս Ստեփանոսներուն ուղղուած ըլլայ Փրկչին խօսքերը. և ասոնցնոյն պիտի փառաւորուին:

Աւագ Տօներուն երրորդին փառաւորեալներն են երկու մեծ գէմքեր:

ՊԵՏՐՈՍ	գէմք մըն էր, յանդուզն
ԵՒ	եւ վեհերոս միանդամայն, բայց կը ճառագայթէր մաքուր հոգի մը. իր անուան խորհուրդը արգարացուց իր հաւատքին ժայռի նման ամրութեամբ: Փրկչին մատնութեան գիշերը ուրացողը, և զեռ մինչեւ վերջին վարկեանը իր ծառայութիւններուն՝ մահէն վախողը, Յո՞ երաւ հարցումէն սթափած՝ չվարանեցաւ իր արիւնով վկայել իր սորված և քարոզած Աւետարանին ճշմարտութեան:
ՊՈՂՈՍ	Պօղոս մա՛րդն է տեսիլներու և յայտնութիւններու: Աւետարանի համարձակ հալածիչ մը, եղաւ հաւատացեալ քարոզիչն անոր: Իսկ իր քարոզութիւնն եղաւ

Պօղոս մա՛րդն է տեսիլներու և յայտնութիւններու: Աւետարանի համարձակ հալածիչ մը, եղաւ հաւատացեալ քարոզիչն անոր: Իսկ իր քարոզութիւնն եղաւ

նահատակութիւն մը ծայրէծայր։ Այս զարմանալի քրիստոնեայն իր խօսքերուն թովքը սփուեց Պաղեստինէն մինչև Հռոմ, և աշխատեցաւ Աւետարանին դասերը տալու աշխատիսի պայմաններու մէջ, որոնք պարզապէս յուսահատական պիտի ըլլային հասարակ մահկանացուներուն համար։ Պօղոս գիտէր թէ ինչ՝ հաւատացած էր ինքն։ Հո՞ն էր իր ոյժը։

Պետրոս՝ Գալիլիոյ ծովուն վրայ ձուկ կ'որսար, երբ կոչուեցաւ մարդ որսալու։

Պօղոս՝ Երուսաղէմէն Դամասոկոս կ'երթար Աւետարանէն որսացուածները հալածելու, երբ ճամբռոն վրայ լսեց ցնցող ծայրնը։ Սառուղ ինչո՞ւ կը հայածն զիս։ Պօղոս վրկուեցաւ այդ տեսիլքով և վրկեց հաթանոսութիւնը՝ շահելով զայն Աւետարանով։

Պօղոս և Պետրոս զործակից և առաքելակից եղան իրարու, վէճեր ու խնդիրներ ունեցան Աւետարանի հասկըցողութեան և անոր ուսուցման շուրջ, բայց վերջապէս կրցան հասկնալ զիրար և զործեցին։ Երկուքն ալ փառաւորեցին Փրկիչը իրենց զործքով ու արիւնով, ու փառաւորուեցան Անով։

Աւագ Տօներուն չորրորդ և վերջին օդակը կը կազմէն Զերեգեան եղայրներ, Յակորոս և Յովհաննէս,

ՈՐԴԻՔ ՈՐՈՍԱՆ Փրկչին մօրքուրորդինները։ Երկու եղայրներ,

կրակոտ բնոյթ մը ունէին յառուջ, որ ինչպէս կ'երեկի աւելի բուռն էր Յակորոսի վրայ, և փութացուց անոր նահատակութիւնը, իսկ Յովհաննէսի վրայ փոխուեցաւ և սկը եղաւ բոլորովին։ Իրենց շատ եռանդուն մէկ շարժումին և արտայայտութեան համար Փրկիչը՝ Բաներգիս (Որդիք որոտման) տիտղոսը տուաւ անոնց։

Բարեկեցիկ տան մը զաւակներ էին Որդիի որոտման, հետեւցան Վ.Ա.Մ.Դ.Ա.Ց.Տ.Տ. և պահ մը փորձուեցան, իրենց մօր մընսորդութեամբ, փառաւոր զիրքեր ապահովել իրենց համար, երկնից թագաւորութեան մէջ, նստելով Փրկչին աջ ու ձախ կողմերը։

Փրկիչը չմերժեց իրեն եղած խնդիրքը, այլ հարցուց անոնց թէ պիտի կրնա՞ք զիմանալ իմ կրելիք փորձութիւններուն։ — Այո՛, անշուշտ, պատասխանիցին, այնպէս կարծելով թէ այդշափ խոստում մը բաւա-

կան պիտի ըլլար Աւետարանի թագուութեան մէջ ապահովելու իրենց փափաքած զիրքերը։ Բայց Փրկիչն զիտել տուաւ, այդ զիրքերը ես չեմ տար, ես չեմ կրնար տալ, զամն զի այդ զիրքերը կ'առնուին, տուողը ես չեմ, Հայրս է։

Ջերեղեան եղայրներու այս փափաքին կը պարտինք աւետարանական այն սկզբունքը, զոր ինքն Փրկիչը բանաձեւց։ Զեղմէ ո՞վ որ կ'ուզէ մնձ ըլլայ՝ ձեզի պաշօննայ թող ըլլայ, և ձեզմէ ո՞վ որ կ'ուզէ առաջին ըլլայ, թող ծառայ ըլլայ ամէնուն (Մարկ. Ժ. 43, 44)։

Արոնք որ Աւետարանի կը մօտենան փափի և զիրքի համար, կը սխալին։ Հոն մնձ ու պատիկ չկայ. հոն առաջին, միջին և յետին չկայ։ Ամէնքը հաւասար են հոն։ Աւետարաններն իրենք են որ պիտի մնձը ընեն իրենք զիրենք՝ իրենց հասկըցողութեան, իրենց հաւատաքին, իրենց ծառայութեան համեմատ։ Իրաքանչիւր քրիստոնեայ ինքն է որ իր իսկ արժանիյով կը մնձնայ կամ կը պատիկնայ, իսկարինովտացին Յուզա, ինքն մատերից եղաւ ի՛ր հասկըցողութեամբ, ի՛ր հաշույն, և զղջաց. բայց . . . չատ ուշ էր։ Պետրոս ինքն նախայարձակ եղաւ և յայտարարեց մեռնիլ իր Վարդապետը պաշտօպանելու համար. բայց չկրցաւ վտանգի պահուն իր ինքնութիւնը պաշտպանել, ուրացաւ իր Փրկիչը, բայց զղջաց . . . փութով և փրկուեցաւ։ Պօղոս ինքպինքը յանձնեց Փրկչին, և կրցաւ ըսել, և ինչո՞վ պակաս եմ միւս տուաքեալներէն։

Եւ Զերեղեան Յակորոս եթէ չկրցաւ ուղղակի Փրկչին առնել խոստում մը Աւետարանի թագաւորութեան մէջ Անոր աջ կողմը նստելու, բայց առաջին նահատակ առաքեալը եղաւ։ Հերովդէս Ազրիպաս զլիստել տուաւ Սուրբը ՀՀին (Փորձ. ԺԲ.):

Երուսաղէմի Հայոց Ս. Յակոր վանքը և մանաւանդ Տաճարը, իր անունը կը պարտի Զերեղեան Յակորոսին, որուն զլուխը թաղուած է, Գյլայիթ կոչուած մատուռին մէջ։

Սպանիացիներու աւանդութեամբ Զերեղեան Յակորոսն է որ Աւետարան քառորդ է իրենց։

Յովհաննէս՝ Առաքեալն ու Աւետարանիչը եղաւ Սիրիա, մնձ մտերմութեամբ

ծառայեց Փրկչին. Կան էր որ այդ մեծ եւ խորհրդաւոր գիշերը, ընթրեաց սեղանին վրայ՝ ինկաւ Յիսուսի լանջին եւ հարցուց, ո՞վ է քեզ մատնողը :

Յովհաննէս երկար, շատ երկար ապրեցաւ, ըստ աւանդութեան հարիւրամեայ մը եղաւ, իր խօսքով ու անձին օրինակով քարոզեց Աւետարանը, աշակերտութիւն մը հասուց:

Երկու եղբայրներ ալ փառաւորուած են իրենց առաքելական ծառայութեան մէջ: Յակոբոս գլխատումով կարմրեցաւ Աւետարանի ճամբուն վրայ, Յովհաննէս օծեալ ծերութեան մը խաղաղութեան մէջ հանգչեցաւ, կտակելով Յիսուս-Քրիստոսի Եկե-

ղեցւոյն սիրոյ Աւետարան մը:

Յակոբոս, հետաքրքրական է չեշտել, մեր Ա. Յակոբ վանքով ամէնէն շատ հրնչուած սուրբ մը եղաւ Հայոց մէջ: Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Աթոռին պաշտպաններէն մէկն ալ Զեբեդեան Յակոբոսն է, առաջինը ըլլալով Տեառնեղբայր Յակոբոս:

Ո՞րչափ պարզ է այս սուրբերուն հաւատքը, և ո՞րչափ խորունկ անոնց սէրբ հանդէպ Աւետարանի:

Աւետարանով փառաւորուեցան ասոնք ալ, որովհետեւ նախ իրենք փառաւորեցին Աւետարանը:

F. E.

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ֆ Ե Ր Ե Խ Ա Բ Ա Գ Ը Ն Դ Լ

Պիտի երամ, պիտի երամ ծաղկաբափ բազ տանելու
Հօրլու պարտէզը՝ ուր նոր կեանի կ'առնուն առնե ծաղիկներ.
Հոն ծընապայիր պիտի բանամ հոգույս այները ծալ ծալ,
Զի դեղաբաններ ունի իմ Հայր Մեծ վիշտերուն յաղրելու:

Պիտի երամ, պիտի երամ շախ Իրեմ զիր արցունիով
«Տե՛ս, քի ո՞րքան տասապեցայ»: Պիտի նայի նա ինձի
Այլափոխուած իմ կեանինիս, դալկուրեան տակ ամենապայոյ
Պիտի ճանչնայ զիս նա նորկն, զի Հայր ու իմ հարազա:

Պետի ըստ— ու, այդ Դուռն ես. յաղցրիկ հոգի վըշտաեր,
Երկրազունդը ալ տեղ յունի՞ յայլիցդ համար մողորած.
Անուշ հոգինկ, ես Աստուած եմ, այլ ես մի՛ յառողիր,
Աւասիկ ե յուն բուն տունը, անա՛ իմ Սիրտ, օն մըտի՛ր:»

Ո՞վ զրուրիւն, ո՞վ Քաղցրուրիւն, Սուրբ Ապաւտան. ո՞վ իմ Հայր.
Դու լըսեցիր նեծնանիներն այս զաւակիդ որ կուրար.
Ժամանած եմ արդիկ Քեզի, վանձիր թեզ կը յուսամ,
Քանզի ունիս Դու այն առնենին, զորս ես յասին կորուսի:

Դու յես մերժեր այն ծաղիկը՝ որ զեղեցիկ չէ՛ այլ եւս.
Երկրազունդի այս ոնիրը Երկրնին մեջ է յաւուած.
Գիտեմ քի Դու պի՛ չսմիծես այս Բու զաւակդ ապիրաս:
Որ չէ՛ երեկ ՇԱԽԱՌ ոչինչ, այլ ՏԾԻԱՌ և առնե ինչ:

M^{me} DESBODES - VALMORE

Պոսրըն

Թրզի. ՇԱՀԿ Ե. ՎԱՐԴԱՊԵՏ